ՆՈՐ-ԴԱՐ

№ 97 ՏԱՍՆԵՒԻՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Ուրբաթ, 10 Յունիսի 1894 Ուրբաթ, 10 Յունիսի, ՏԱՍՆԵՒԻՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 97

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կոպ., րեկլամների համար կրկնապատ տիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդ. — Քահանայական ընթերցարաններ։

Քրոնիկոն.—Ս. Էջմիածնից, Խաչ. Աբովեանի արձանը։ Տիկ. Նազիբեանցի նուէրը։ Կ. Պոլսից։ Միևական հոգաբարձութիւնների կանոնադրութիւնը։ Բաքուի սինոդիկաի խնդիրքը։ Երզնկայի նաւթային աղբիւրները չհաղորդող նոր ընկ. Դպրոցական թերթեր Թիֆլիսի չորջանում։ Կուչկայից։ Երևանից։ Մուղրութի գիւղից։ Նոր հրատարակութիւն։ Երաժշտական աշխարհից։

Քթի հիւանդութիւնները և չղայնութիւն։

Թղթակցութիւններ.—Նիժ։

Բաղաքական.—Բազաքական լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագրեր։
Պետերսվսկից։

Բանասիրական. — Աշխարհիս վախճանը (վերջ)։

Տեղեկատու։ — Կանոնագրութիւն Վրաստանի և Իմերէթի լեռնի հայոց եկեղեցիների ծխական հոգաբարձուաց։

Յայտարարութիւններ.

Թիֆլիս, 9 յունիսի 1894 թ.

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐ

—

Որ մեր քահանայական դասակարգը մեծ մասամբ իւր մտաւոր կարողութիւնով շատ ողորմելի է, այդ ամենքը գիտեն։ Որ նա իւր ունեցած պատրաստութիւեամբ անկարող է գէթ մասամբ կատարել այն պարտականութիւնը, որ նրա վրայ է դրուած, այդ ևս ամենքին յայտնի ճշմարտութիւն է։

Խաւար հօտին կոյր հովիւներ են կարգուած. ամենքին յայտնի է այս, ամենքը ողբում են այդ դրութեան վրայ։

Գիտենք, ողբում ենք, այլ և յարձակւում ենք այդ դրութեան վրայ։ Պահանջում ենք, որ կոյր հովիւն իւր հօտին լաւ առաջնորդի, ցանկանում ենք, որ ապիկար ըժշկիկը հիւանդութիւնը վերացնի։ Սակը անհամած է, մենք պահանջում ենք, որ նա կերակուրին համ տայ։

Արդար է արդեօք այս վարմունքը, անվերջ յարձակումները կարող են կոյրին լաւ առաջնորդ դարձնել և օշլակարին՝ հմուտ ըժիշկ։

Կասկածում ենք։

Պահանջեցէք, որ անգամալոյծը վազէ, որ կոյրը գոյները ըմպշէ, որ խուլը Բեթհովէնի երաժշտութեան մասին հիմնաւոր դատողութիւն տայ։

Պահանջեցէք, և տեսնենք ինչ հեռանք կունենան ձեր պահանջները։

Այսպիսի դեր չեն խաղում արդեօք այն ամենքը, որոնք անգադար քահանայական դասակարգի տգիտութեան վրայ յարձակուելով, պահանջում են, որ նա՝ այդ դասակարգը լուսաւորի խաւար ժողովրդի միտքը։

Աւելորդ է ասել, որ այդ յարձակումը մամուլի կողմից դեռ հասկանալի է։ Կոյր հովիւների վրայ յարձակուելով՝ մամուլն ըստ երևոյթին ձգտում է արգելել տգէտ և անպատրաստ մարդկանց քահանայական տասպարէզ մանելը։

Բայց ինչ միտք, ինչ բարոյական ձգտում ունի այն յարձակումն ու անվմատ պահանջը, որ կատարում են եկեղեցականները։ Իրաւունքը և իշխանութիւնը նրանց ձեռքին է. կարող են տգէտներին և անպատրաստներին ըոլորովին չձեռնադրել, ասպարէզից միանգամայն հեռացնել։ Բայց էրական կեանքում, գործով նրանք ձեռնադրում են տգէտ, անընդունակ, չարաբարոյ (այո, մինչև անգամ չարաբարոյ) մարդկանց և տալա հրապարակ են իջնում, դադարկ փրազներով տգէտների ձեռնադրութեան դէմ են խօսում։

Սա ինչ կեղծաւորութիւն է։

Իշխանութիւն և իրաւունք կայ նրանց ձեռքին։ Նրանք կարող են, ինչ ենք ասում, պէտք է աշխատեն քահանայական դասակարգի դրութիւնը բարձրացնել, գործել, հովուելու միջոց և ճանապարհ ցոյց տալ, ստիպել, որ քահանաները իրենց ժամանակն ի զուր չվատնեն, այլ կարդան, պարապեն, աշխատեն... Նրանք այդ չեն անում, նրանց ստրուկ են դարձնում, իրենց հաճոյքին ծառայեցնում։ Եւ տալա հրապարակով, մամուլի միջոցով այդ իսկ քահանաների տգիտութիւնն են ողբում, նրանց անգործութիւնը, նրանց չարաբարոյութիւնն են հարուածում։

Այս ինչ վարիսեցիութիւն է։

Եւ մեր կեանքը տանում է այդ կոկորդիլեան արցունքները. որոնք դեռ մեր կեանքի մէջ կարեկցութիւն էլ են շարժում։

«Ո՜հ, մերձենում են մեզ դժոխքի դռները»—գոչում է «Աստուածային կատակերգութեան» հանճարեղ հեղինակը։

Խե՜ղճ հայ ժողովուրդ, քո մխիթարութիւնը շահագործում են, ոսկու կեղևի տակ քեզ ապէ են տալիս, սրբութեան անունով ապականութիւն են մատակարում քեզ, և քո միամտութիւնն ընդունում է այդ, խնդութեան ճիչ է արձակում և ծափահարում է դիմակաւոր վարիսեցիներին։

Ժողովրդի զգացմունքի հետ այդպէս խաղում են այն գործիչները, որոնք ձեռնածուի նման խաբելով ժողովրդին, տենչում են նրա ծափահարութիւնները վաստակել։ Իսկ նա, որ ժողովրդի իրական շահերին է նուիրուած, միայն մի բան է մտածում—գործել, օգտակար լինել, պարտականութիւն կատարել։

Քահանան տգէտ է,—շատ լաւ. ինչ պէտք է անել։ Նոր ձեռնադրուողների միջից մերժելով մերժում ենք տգէտներին։ Բայց արդէն ձեռնադրուած տգէտների ապագին բազմութիւն կայ, կոյր հովիւների մի մեծ դասակարգ։ Տգիտութիւնը դեռ մի կողմ մնայ. նրանք իրենց մասնաւոր կեանքով վկայնում են ժողովրդի բարոյականը։ Մ'իթէ հնար չկայ այդ ախտի դէմ կռուելու։ Մ'իթէ անկարելի է նրանց վրքը ի շատէ իրենց դրութիւնից բարձրացնել։

Կարելի և հնարաւոր է։ Բարի կամք և գործելու եռանդ է միայն հարկաւոր, և անհնարին կարծուածը հնարաւոր կը դառնայ։

Մեր քահանաների այժմեան ահռելայ կենցաղն այնպէս է, որ թոյլ չի գործելով մարդերի վրայ, այն կարծիքն էին առաջացրել, թէ աշխարհս վախճանն է լինելու՝ մինչև որ պարզուէր այն խնդիրը, թէ խաւարումն առաջանում է երկրի չորջ լուսնի կաապատ չրջանից, և առանց սբխալելու կարելի է առաջուց մաթեմատիկական ճշտութեամբ գուշակել այդ խաւարումները։ Այդպիսի ազդեցութիւն էին գործում նաև երկնային ուրիշ երևոյթները, ինչպէս օրինակ նոր աստղերի յանկարծական երևան գալը, որը, սակայն, աւելի քիչ է պատահում, քան թէ արևի խաւարումը։

Ամենից աւելի չվոթութիւն պատճառեց 1572 թուին երևեցած նոր աստղը։ Բարթուղիմէոսեան գիշերից մի քանի ամիս յետոյ, այսինքն նոյեմբերի 11-ին, յանկարծ Կասսիոպէյի համաստեղութեան մէջ առաջին կարգի մեծութեան մի աստղ երևաց։ Այդ բանը չափազանց զարմացրեց ոչ միայն հասարակ մահկանացուներին, որոնք իրարանչիւր գիշեր տեսնում էին, թէ ինչպէս դա փայլում էր երկնակամարի վրայ, այլ և գիտնականներին, որոնք ըոլորովին չէին կարողանում մնկնել այդ երևոյթը։ Սակայն մի քանի տասդագէտներ հետևութեամբ բացատրեցին այդ երևոյթի պատճառները։ Նրանք ասում էին, որ դա նոյն այն աստղն է, որ տեսել էին մոգերը, և որ այժմ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻՍ ՎԱԽՃԱՆԸ

(Վերջ *)

Սակայն չի կարելի խոստովանուել, որ արևի խաւարումը մի այնպիսի երևոյթ է, որ ամեն տեսակ պայմաններ ունի երևակայութեան վրայ ընդարմացուցիչ ազդեցութիւն գործելու համար։ Յեղկուայ թագուհին—արևը, որ իւր բարերար ճառագայթներով կենդանացնում է աշխարքս, յանկարծ սկսում է աղօտանալ, և նոյն քան ըոլորովին խաւարելը, մեռելատիպ դժգոյն լոյս է արձակում մեզ վրայ։ Ամբողջ երկինքը չարագուշակ, մայր երանգ է առնում։ Կենդանիները սարսափահար են լինում,—ձիերը հրաժարւում են առաջ գնալ, գալթնի հնները բարացած՝ մնում են կանգնած, շունը իւր սիրոջ մօտ է կծկւում, թռչունը իւր ճուտերը հաւաքած դէպի հաւաքուն է չտապում, թռչունները դադարում են երգելուց, իսկ երբեմն էլ ահից անչնչացած գետին ղըսւում։ Արագոն, 1842 թ. յունիսի 8-ին Պերպինիանում եղած խաւարումը նկարագրելով, ասում է, թէ հրապարակում հաւաքուած 20,000 հոգուց բաղկացած բազմութիւնն արդէն

*) Տես «Նոր-Դար» № 96։

ինքն ըստ ինքեան չատ հետաքրքիր երևոյթ էր կազմում։ Երբ արևից միայն մի նեղ մահիկ (հզջիւր) էր մնացել, որ համեմատաբար չատ նուազ լոյս էր արձակում, մի անհանգստութիւն ընկաւ բազմութեան մէջ։ Իւրաքանչիւր ոք ուզում էր իւր տպաւորութիւնները հաղորդել իւր հարևանին։ Հրապարակում մի խուլ ժուժուկ ընկաւ, որ նման էր վոթարկից յետոյ հեռու ծովից հասնող ձայների։ Բանի արևի մահիկը փոքրանում էր, այնքան էլ աւելանում էր այդ աղմուկը։ Վերջապէս մահիկը ըոլորովին անհետացաւ, և յոյսին յաջորդից խաւարը, և մի այնպիսի լռութիւն տիրեց, որ որոշակի լսւում էր մերձաքաղաքական ժամացոյցի ճոճանակի ամեն մի ճոճումը։ Երկնային երևոյթի վհատութիւնը յաղթող հանդիսացաւ հիւանդարոցների անհոգ զուարճասէրների և այն թեթևամիտ ու անապաշտ անտարբերութեան վրայ, որ չատերը մատուր զարգացման անհրաժեշտ ցուցանակն են համարում։ Խորին լռութիւն էր տիրել նաև օդի մէջ. թռչունները դադարեցին երգելուց... Մօտ երկու րոպէ տևող տաղտակալի սպասողական դրութիւնից յետոյ, բուռն ուրախութեամբ և կատաղի ծափահարութիւններով ողջունեցին արևի առաջին ճառագայթների երևալը։ Երկիւղած տխրութեան զգացումը, որ

դարձեալ վերադարձել է, որպէս զի ահաւոր դատաստանն ու մեռելների արութիւնը յայտարարէ աշխարհին։ Հասկանալի է, որ այդ կարծիքը մեծ ներգործութիւն էր ունենալու անտիապաշտ ամբոխի վրայ... Սակայն նոր աստղ լոյսը քանի գնում նուազում էր և տարի ու կէսից յետոյ նորից չքացաւ՝ առանց մեզ վրդովմունք պատճառելու, բացի այն թշուառութիւններից, որոնցով մարդկութիւնը միշտ և հանապազ անմտարար համեմում է երկրային առանց այն էլ չարաբաստիկ կեանքը մեր անպիտան մոլորակի վրայ։

Իսկ ինչ հրաբղխային ժայթքումներին ու երկրաշարժներին է վերաբերում, դրանք երբեմն այնպիսի զարհուրելի զօրութեամբ են երևան գալիս, որ բոլորովին իրաւացի կերպով աշխարհիս վախճանն են յիշեցնում մարդկանց։ Երևակայենք, օրինակ, թէ ինչ մտածելիս և զգալիս կըլինէին Հերկուլանում և Պոմպէյի քաղաքների բնակիչները Վեզուվ սարի ժայթքման միջոցին, երբ հրաբղխային մոխրի տակ թաղուեցան այդ երկու քաղաքները։ Յայտնի բան է, որ այդ ժայթքումն յիշեալ երկու քաղաքի բնակիչների համար կատարեալ աշխարքիս վախճանն էր։ Հենց միևնոյնն են զգալիս եղել նաև համաստատ մօտիկ ժամանակներս Զան-

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹԻՒՆ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԻՆ

Ի. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ.—Ա.Ն.Ա.Ֆ.Ա.Ս.Ի.Ա.Ն.Ի. ՀԱՐՑԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Ա. ՓՈՂՈՍԵԱՆ ԳԱՐԵԳԻՆ.—Ա.Ն.Ա.Ֆ.Ա.Ս.Ի.Ա.Ն.Ի. ՀԱՐՑԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Ի. ՍՈՒՄԱԿԵԱՆ.—Ա.Ն.Ա.Ֆ.Ա.Ս.Ի.Ա.Ն.Ի. ՀԱՐՑԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Ա

ընդունակ և ձեռնհաս, հողով հայ երաժիշտը միայն կարող է հայ ժողովրդի բերանից իսկութեամբ լսել նրա սրտի և հոգու հարազատ մրմունջները, որոնցից կարող է ներդաշնակ հիւսածներ կազմել և պատուաստել նոյն ժողովրդի երակների մէջ։ Բայց, ատրաբաղդաբար, որքան մեզ յայտնի է, ամբողջ 4 միլիոն հայ ազգի մէջ այժմ երկու մասնագէտ երաժիշտներ կան միայն, այն է՝ արևմտահայոց մէջ պ. Ջուխաճեան, իսկ արևելահայ ուսահայոց մէջ պ. Մակար Եկմալեանց, որոնք, եթէ ուզենան, մեր հայոց նորաբոլոջ ձայնագրութեան արուեստի մշակման և մեր երգեցողութեան կանոնաւոր զարգացման գործին մեծ ծառայութիւններ կարող են մատուցանել։

Մոսկուայի երաժշտանոցում այս տարուան աւարտող և դիպլոմ ստացողներից մինն էլ մի հայ երիտասարդ է, պ. Յովսէփ Տէր-Վարդանեան, որ իր ուսումը Պետերսեան երկրագործական ճեմարանում աւարտելուց յետոյ, վճռ տալի էր, որ դիշեր ցերեկ անձնատուր էր եղած իւր սիրած երաժշտական ուսման գործին. այս տարի աջողութեամբ աւարտից տեղիս երաժշտանոցի դասընթացը և փառաւոր դիպլոմ ստացաւ։ Նորաւարտ երիտասարդ պ. Յովսէփ Տէր-Վարդանեանը Թիֆլիսի առաջաւոր և նշանաւոր մի տոհմի զաւակ է, որ իւր արտակարգ ընդունակութեան չնորհիւ սրտիկ էր վայելում և տեղիս բարձր դասակարգի յայտնի աներում մտանաւոր դասեր ունէր նոյն իսկ իւր ուսանողութեան ժամանակ։

Ղազարոս Ք. Յովսէփեան։
Մոսկուա։

ՔԹԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՋՐԱՑՆՈՒԹԻՒՆ

—

Գերմանիայում նորերս լոյս է տեսել բժ. Վ. Լիւհտի Ֆլիսի մի դրքոյկ՝ «Նոր փաստեր քթի և ջրային հիւանդութիւնների» վերնագրով, որ նոր լոյս է սրփռում մեր բազմաթիւ նեարդային հիւանդութիւնների վրայ։

Գրքի մէջ բերուած են 130 դէպքեր, որոնք պարզում են այն յարաբերութիւնը, որ կայ քթի հիւանդութիւնների և ընդհանուր նեարդային թուլութեան մէջ։ Նրանք ցոյց են տալիս, որ քթի հիւանդութիւնները չափազանց աւելի կարևոր նշանակութիւն ունին, քան առհասարակ կարծում են, և թէ, ընդհանրապէս, այս գործարանը, որին չատ ծաղրարար ենք վերաբերում, արժանի է աւելի մեծ ուշադրութեան։

Որ քթի հիւանդութիւնները ազդեցութիւն են ունենում ամբողջ կազմուածքի վրայ—սա աւելի էլ յայտնի էր։ Մեզանից իւրաքանչիւր ոք էլ հարբուխի ժամանակ կարող է իւր վրայ դիտած լինել, թէ որ աստիճան մարդիս ուշադրութիւնը հարբուխի միջոցին թուլանում է, թէ ինչպէս նոյն է գործում ուղղը և թէ առհասարակ ինչքան ճնշուած դրութեան մէջ է լինում բոլոր մարմնակազմը։ Սրանից մի քանի տարի առաջ մի քանի բժիշկներ, ինչպէս Պ. Մայիէրը, պրոֆ. Գիւյիէ և ուրիշներն աւանձին ուշադրութիւն են դարձրել այսպէս կոչուած անընդունակ և անուշադիր ախտիկների վրայ, որոնց ենթարկել են բժշկական մանրակրկիտ քննութեան։ Եւ ինչ։ Բանից երևում է, որ բժշկական քննութեան ենթարկուող ծոյլերից մեծ մասը քթի մէջ ուռոյցներ և աւելուկներ են ունեցել։ Բժիշկներն այդ ուռոյցներն ու աւելորդ մասները հեռացնում են, և ախտիկներն աջողութեամբ չարունակում են իրենց ուսումն, և նրանց ընդունակութիւնները կանոնաւորում են՝ աւանդուած առարկաներն իւրացնելու համար։

Ի նկատի առնելով այս փաստը, բժ. Ֆլիսի բերած դէպքերը մեզ զարմանալի չպիտի թուին։ Այս դիպուածներում քթի հիւանդութիւնները ազդեցութիւն են ունեցել կազմուածքի այնպիսի հանուրը մասերի վրայ, որոնց հետ ուղեղացած կապի մասին դժուար էր ենթադրել, ինչպէս օրինակ մէջքի, ստամոքսի, սրտի հետ։ Ամենից նուազ նոյն ինքը հիւանդն է ենթադրում այս կապը. երբ նրան յայտնում են, թէ նա քթի հիւանդութիւն ունի, նա բոլոր ուժով բողոքում է դրա դէմ։ Այն ինչ քթի մէջ եղած աւելամասերը, պոլիպոտները և ուռոյցքները ազացոյց են հենց այդ հիւանդութեան գոյութեան, և յիրաւի, դրանց հեռացնելով՝ իսկոյն կորչում են նաև սրտի, մէջքի, ստամոքսի ախտերութիւնները, որոնց մասին դանգատւում է հիւանդը։

Այսպէս, բժ. Ֆլիսն ամենից առաջ հաստատում է այն անտարակուսելի կապը, որ կայ քթի հիւանդութիւնների և ընդացաւերի, գլխացաւերի, անհանգիստ քնի միջև և այլն։ Բայց, բացի այս հիւանդութիւններից, որոնց կապը հիւանդութիւնների հետ աւելի կամ պակաս հասկանալի է, բժ. Ֆլիսը յիշում է նաև մի քանի ուրիշ ախտերութիւններ, ինչպէս թիակի և կողերի մէջ ղգացուղ ցաւը, որի առանձին հրնշման ցաւերը, որոնց միջոցին, կարծես աւելի բացորոշ լինելու համար, նկատւում են նաև այն նշաններից չատերը, որոնք բնորոշ են նեարդային ախտերութեանն առհասարակ՝—ջղային թուլութեանը, սրտի թուլութիւններին և այլն։ Քթի հիւանդութիւնների և այս տեսակ ցաւերի միջև եղած անկասկածելի կապն ապացուցանւում է նաև նրանով, որ քթի կոկային ատամած տեղը նեղմուծելով խոռոչի մէջ, այդ ցաւերը ժամանակաւորապէս անցնում են։ Իսկ հիւանդի առողջութիւնը լրիվին վերականգնում է այն ժամանակ, երբ բոլորովին ատողջացնում են քթի այս կամ այն հիւանդութիւնը։ Բժ. Ֆլիսի դիտողութիւնները նմանապէս ցոյց են տալիս, որ ստամոքսի չատ հիւանդութիւնները, օրինակ՝ ախորժակի բացակայութիւնը, սիրտ խառնիլը, փսխիլը, բոլորովին անցնում են երբ բժշկում են քթի հիւանդութիւնները։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիժ, 5 յունիսի.—Ռաման գործը չատ ատր ատիճանի վրայ է Նուխու Ղարաղա գաւառում։ Նայելով գաւառի մեծութեան, գիւղերի բազմամարդութեան և հարստութեան, ընդհանրապէս անկարելի է չասել, որ նա չի աշխատում ուսում ձեռք բերել։ Շատ գիւղերում ուսումնարան չկայ, հետևապէս գտնում է և այնպիսի գիւղ, որի մէջ գոնէ մէկը գրել կարդալ չի իմանում։ Մի գիւղում քահանայ չկայ, միւսում եկեղեցի թէև կայ, բայց ժամասացութիւն չի կատարւում. ժողովուրդն էլ անտարբեր է։ Հարստին եթէ խօսեցնում ես, ասում է. «կարդալը լաւ բան է. ով չկարդայ նա կենդանի է»։ բայց այդ հարուստն ունի երկու-երեք տղաներ, ոչ մէկին ուսումնարան չի տալիս։ Բայց սիրի ատած, որ չատ երեխաներ փախչում են ուրիշ քաղաք կարդալու նպատակով. բայց որ նիւթապէս օգնող չեն գտնում, ճարահատեալ մնում են վաճառականի խանութը։

Հայ Ջառլու և Միրզաբէկլու թրքախօս գիւղերում չկայ ուսումնարան. բացի այդ, չունին իրենց համար մինչև անգամ սեպհական քահանայ։ Այս գիւղերում հարուստներ չատ կան. բայց գաւակներն ուսման ծարաւից պապակում են։ Սուլթան-Նուխի թրքախօս գիւղում հայերէն իմացողներին մատով կարելի է համարել. ունին ուսումնարան, բայց դրա գոյութիւնը հազիւ է պահպանւում. նա ամենևին արդիւնք չի տալիս. դպրոցը թէև Բագուի Մարդ. ընկերութիւնից իւրաքանչիւր տարի նպաստ է ընդունում, բայց կանոնաւոր չէ։ Անցեալ տարի նա փակուած մնաց. այս տարի դեկտեմբերի սկզբներում բացուեցին նրա փակուած դռնները. աշակերտներ քիչ են. նրանք նոյն իսկ դպրոցում հայերէն խօսել չեն կարողանում։

Ամիրուանի դպրոցը բաւական վիճակում է. գիւղը թէև աղքատ է, բայց յարգում է իւր դպրոցը. յամենայն դէպս աշխատում է նրա գոյութիւնը պահպանել։

Ելիզաւետպոլի գիւղը հնուց ունի մի ծխական դպրոց. բացի ժողովրդի տուրքից. Բագուի Մարդ. ընկերութիւնը օգնում է դրան։

Նիժի դպրոցն այս տարի բաւական կենդանութիւն էր առացած, թէև անցեալ տարի նա բացուել էր փոքրութեան. ունի 50-ի չափ աշակերտներ. բայց դա քաջալերիչ չէ մի այնպիսի գիւղի համար, որն ունի 800 տուն։ Տների հեռաւորութիւնը դժուարացնում է աշակերտների գործը. ձմեռը չատ են չարչարւում ցրտից։

Ղարայայի միւս ութ հայ գիւղերում չկայ ուսումնարան. ժողովուրդը դեռ դպրոցի նշանակութիւնը չի հասկացել. նայում է նրա վրայ իբրև մի անպէտք առարկայի վրայ։

Սևորդի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Անգլիական լրագիրները մեայլ գոյներով են նկարագրում Կորէայում վերջերս տեղի ունեցող անցքերը։ Այդտեղ ծագած ապստամբութիւնը միջազգային տեսակէտից կարևոր նշանակութիւն ունի. դրանով ընդհարւում են իրար Չինաստանի և Եապոնիայի չահերը. անծաս չէ և Ռուսիան Կորէային հարևան լինելու պատճառով։ Կորէան իսկապէս մի «հիւանդ» երկիր է հեռաւոր Արևելքում։ Թագաւորը գրեթէ իշխանութիւն չունի. պալատական անձերը պատկանում են արևելքի ամենանսեմացած և անբարոյական մարդկանց չարքին. զօրքը գրոյ չարժի, իսկ նաւատորմիղ չկայ, որովհետև փող չկայ։ Կորէան նշանակութիւն ունի միայն իւր աշխարհագրական դիրքի պատճառով։ Չինացիները Կորէան համարում են Երկնային կայսրութեան մի մասը, և այդ հիման վրայ է, որ նրանք այնտեղ զօրք են ուղարկել, բայց եապոնացիներն էլ են զօրք ուղարկել միևնոյն տեղը՝ իրենց հիւպատոսարանները պաշտպանելու պատրուակով։ Ապստամբութեան անուղղակի առիթն եղել է մի սպանութիւն Շանհայում. Կորէայի կառավարութեան յանձնարարութեամբ սպանել են 1884 թուին Սուէլի արքունիքում եղած կոտորածի գլխաւոր հեղինակին—Կիմին։ Երբ սպանուած Կիմին տարան Սուէլ, նրա գլուխը հանեցին դագաղից, գլխատեցին և մարմինը չորս մասի կտրատելով կախ տուին սիւների վրայ մայրաքաղաքի զանազան թաղերում։ Այդ բանից կառավարութեան թշնամիները կատաղեցին, և Տոկիո գաւառում ապստամբութիւն ծագեց, որին մասնակցում էին 10,000 հոգի։ Պետական պաշտօնեաները սպանուեցան, արքայական կոմիսարը փախաւ, ապստամբների դէմ ուղարկուած զօրքերը չարդուեցան։ Մինչդեռ այդ ժամանակ Եապոնիան Կորէայի կառավարութիւնից վճռական պատասխան էր պահանջում իւր հարցին, թէ՝ ինչ իրաւունքով նա հրամայել էր սպանել Կիմին, որ ապրում էր Շանհայում սպանական կառավարութեան հովանաւորութեան տակ։ Եւ Եապոնիան սպառնում էր իսկ իւր գիպլոմատիկական յարաբերութիւնները։

—Անգլիան, Ֆրանսիան և Սպանիան իրար մէջ համաձայնութիւն են կայացրել չէզոք մնալ Մարոկկոյի դահի երկու էլ թեկնածուների վերաբերմամբ։ Այդ պետութիւնների նաւատորմիղները միայն այն դէպքում կուղարկուեն դէպի Մարոկկոյի ափերը, երբ, իրերի դրութիւնը նայելով, այդ անհրաժեշտ կըլինի։

—Բերլինում մեծ ազդակ է հանել կիսապաշտօնական «Գերմանիայի կիսապաշտօնական Վեօլնի լրագրի» մերկացուցմունքը Գերմանիայի դէպի Մարոկկոյի գործերն ունենած յարաբերութիւնների մասին։ Բանից երևում է, որ Գերմանիան այդ խնդրում պէտք Անգլիան և Սպանիան թշնամական դիրք ունի բռնած։

—Իօրկի հերցոգի մօտ այս օրերս եղած բանկետում, ուր ներկայ էր և Ուելսի պրինցը, լորդ Սոզբերին ճառ է խօսել, որի մէջ ասել է, թէ Անգլիան հետևում է խաղաղասէր քաղաքականութեան և, նաւատորմիղը զօրեղացնելով հանդերձ, նա ամենևին յիտ չի կանգնում այդ քաղաքականութենից։

—Բուլղարական նոր կառավարութեան օրգան «Սվոբոդնոյէ Սլովո» թերթը հաղորդում է, որ Սոֆիայի քաղաքային վարչութեան գործերը ժամանակաւորապէս վարելու համար կառավարութեան նշանակած յանձնաժողովը գործերն այնպիսի անկարգ դրութեան մէջ է գտել, որ պահանջել է դատ բանալ։ Ասում են, որ նոր մինիստրութիւնը բաւմաթիւ պնդծումներ է գտել։

—«Secolo» լրագիրը հաղորդում է որ Սիցիլիայում ապստամբութիւնը ապառնական ծաւալ է ստանում. 30,000 բանուոր ծծումբի հանքերում ուղղակի սպառնում են հրոյ ճարակ դարձնել դաշտերում հաւաքած հացահատիկները, եթէ չեն օգնել իրենց, որ սովից չմեռնեն։ Ապստամբութիւնը սաստկացել է այն աստիճան, որ կալուածատէրերը հրաժարւում են դաշտային աշխատանքներից, իսկ իտալական միւս լրագիրները գրում են, թէ չնայելով որ դրութիւնն այն աստիճան վտանգաւոր չէ, ինչպէս «Secolo»-ն է գրում, բայց և այնպէս անհրաժեշտ է չտատպոյթ միջոցներ ձեռք առնել Սիցիլիայի բնակիչներին օգնելու համար։

—Կաուդենբուրդում բանտարկութեան են դատապարտուած Ռումինիայի տաս ամէկ հոգի քահանաներ, որոնք դովիլես են եղել Ատտրիայի կայսրին ներկայացրած մեմորանդումի համար դատապարտուած ռումինիանների վերմուներ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ելիզաբեթ ֆէյ.—Նիու-Եօրկի Madison Iquare-ում կախուած է մի ահագին ցուցանակ 20 մետր բարձրութեամբ և 24 մետր լայն։ Ցուցանակ բաղկացած է 107 տառից, իւրաքանչիւրը 2 մետր մեծութեամբ, որոնք լուսաւորւում են 1457 էլէքտրական կանթէղներով։ Ցուցանակ լուսաւորութեան համար գործ է դրւում 150 ձիու ոյժ և իւրաքանչիւր րոպէում ծախսւում է 1 ֆր. 25 ս. (46 կոպէկ)։ Սա միակն է և ամենաթանգը աշխարհում գոյութիւն ունեցող ցուցանակների, և դրան վճարուել է 31,500 ֆլորանի։

—

Ժուժիլ ընէրուէն.—Նիւ-Եօրկի Madison Iquare-ում կախուած է մի ահագին ցուցանակ 20 մետր բարձրութեամբ և 24 մետր լայն։ Ցուցանակ բաղկացած է 107 տառից, իւրաքանչիւրը 2 մետր մեծութեամբ, որոնք լուսաւորւում են 1457 էլէքտրական կանթէղներով։ Ցուցանակ լուսաւորութեան համար գործ է դրւում 150 ձիու ոյժ և իւրաքանչիւր րոպէում ծախսւում է 1 ֆր. 25 ս. (46 կոպէկ)։ Սա միակն է և ամենաթանգը աշխարհում գոյութիւն ունեցող ցուցանակների, և դրան վճարուել է 31,500 ֆլորանի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱԳԻՆ ԴԻՐՔԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 8 յունիսի. — Մինիստրների ժողովում լուսաւորութեան մինիստրը յայտնեց, որ ինքը տիկ. Մոնտեբելլոյի միջոցով չնորհակալութիւն է յայտնել ռուս տիկնանց այն ատենիւ, որ նրանք 18,000 ֆրանկ են ուղարկել կանանց լիսէումների մէկում ատիպենդիա հաստատելու համար, որ պիտի կոչուի վազդուխտեան ատիպենդիա»։

ՏԱՆԺԻՏ.—Աբդուլ Ազիզի մեծ հղբայր Մուլէյ-Մահմեդը ատարգից այն արձանագրութեան, որով նա Աբդուլ-Ազիզին ընդունում է սուլթան։ Ամեն ինչ քաղաքակրթ դրութեան մէջ է։

ՊԵՏԵՐՎԱՍԿ, 4 յունիսի.—Պատուական «Նոր-Դար»-ի ներկայ տարուայ № 85-ի մէջ երևեցաւ Շուրթյից հերքումն իմ գրած լուրի դէմ։ Յաղագս ծագումը, իւր տակով, ուզում է հմտութիւնը վերականգնել և հաստատել, որ ժողովուրդը սեպհական քահանայի կարիք չունի, թէ ժամասացութիւն միշտ եղել է, և ժողովուրդը գոհ է։ Կաշխատենք ցոյց տալ որքան ուղիղ է այդ հերքումը։

Տէր հայրը իւր հերքման մէջ ուզում է ցոյց տալ, որ ժամասացութիւն միշտ եղել է, բայց ամիսներով ժամասացութիւն լինելը ինքն է հաստատում հետևեալ խոսքերով. «ժամասացութիւն եղաւ մեծ պատի երկրորդ և վեցերորդ չաբթում, ս. Աստուան տօնի օրը։ Կարծես թէ երկրորդ չաբաթից մինչև վեցերորդը մի ամիս չէ լինում։

Թոյլ տուէք հարցնել ձեզ, տէր հայր, ով է մեզնում պատարագել ս. Լուսաւորչի տօնի օրը, Մաղակապրդին, Աւագ հինգշաբթի, Զատիկ ճաշին, մեռելոց օրը, Սրբոցդ՝ գոք դրում էք. ժողովուրդը քահանայի չի սպասում, այդ էլ սխալ է՝ որովհետև տեղւոյս ժողովուրդը դիմել է հոգևոր իշխանութեանը և յայտնել իրենց դրութիւնը։ Վիճ. կոնսիստորը մինչև նոր քահանայի ձեռնադրութիւնը ժամանակաւոր հովիւ է նշանակել բարեկ. Գ. ք. Մկրտումեանին, որն արդէն ժամանել է Պետրովսկ։

Սրանից պարզ երևում է, որ ժողովուրդը աւանձին քահանայի կարիք ունի։ Սրբոցդ՝ մինչև ձեր Ալէք. Փորից վերադառնալը, վիճ. կոնսիստորը նշանակել էր Ղազարից բարեկ. Գ. ք. Աւագեանին, գիտնալով հանդերձ, որ դուք երկրագնդի եղբայրն էք։

Ուրեմն ձեզ նշանակելու պատճառը ոչ թէ նախնաւանդ սովորութիւնն է կամ արդիւնքի լիովին հասցնելը, այլ՝ նշանակուած քահանայի Պետրովսկ դալուց հրաժարուիլը։

Ձեր կարծիքը թէ՝ մի երրորդ մասով աւանձին քահանայ չի կարող ապրել—բոլորովին սխալ է, որովհետև նոր քահանայութեան այդ մասին իւր համաձայնութիւնը տուել է։

Ղազարցի։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Վրաստանի եւ Իմերէթի Ամէն Հայոց եկեղեցիների ծխական հոգաբարձութեանց։

—

1) Ծխական եկեղեցու և եկեղեցական դասի բարեկարգութեան և բարեկեցութեան համար հոգ տանելու, որպէս և ծխի չրջանում այլ Աստուածահաճոյ գործեր կատարելու համար ընտրւում են ծխական հոգաբարձութիւններ։

2) Ծխական հոգաբարձութիւնները

լինելով ամենայն Հայոց Մայրապետն Պատրիարք Կաթուղիկոսի հովանաւորութեան տակ, գանւում են անմիջապէս ընդ տեսչութեամբ Թեմակալ Առաջնորդի։

3) Հոգաբարձուների ընտրութիւնը լինում է ծխականների ընդհանուր ժողովով։

4) Ընդհանուր ժողով կազմում են այն ծխականները, որոնք նշանակուած են հոգևոր իշխանութեան հաստատած ընտրող ծխականների ցուցակի ցուցակի մէջ։ (Տես ծան. §24)։

5) Ընդհանուր ժողովի բացումը լինում է քահանաներից մէկի նախագահութեամբ, որին նշանակում է Թեմակալ Առաջնորդը։

6) Անդամներից ամեն մէկը մեծն մի ձայն ունի։

7) Ընդհանուր ժողովն ընտրում է իրեն նախագահ և քարտուղար և մի անձնափոխանորդ։ Նախագահը, քարտուղարն և անձնափոխանորդներն ընտրւում են երեք տարով։ Ընտրութեան մասին յայտնւում է Թեմակալ Առաջնորդին, և եթէ չարաշուայ ընթացքում բողոք չլինի նրա անունով, այն ժամանակ ընտրութիւնը վաւերացած է համարւում։

8) Ընդհանուր ժողովն օրինաւոր է, եթէ առաջին անգամին ներկայ է բոլոր ընտրող ծխականների $^1/_{10}$, իսկ երկրորդ անգամին որչափ որ ժողովուին։ Երկրորդ ժողովը լինելու է ոչ վաղ քան մի չաբաթից յետոյ։ Երկրորդ ժողովի քննութեան առարկայ կարող են լինել միմիայն այն խնդիրները, որոնց համար հրաւիրուած էր առաջին ժողովը։

9) Ընդհանուր ժողովի գումարման օրը մի չաբաթ առաջ յայտնւում է եկեղեցում երեք անգամ՝ այն է նախընթաց չաբաթ երկոյին և կիւրակէ առաւօտեան և պատարագից յետոյ։ Միևնոյն ժամանակ մի չաբաթ առաջ յայտնւում է ծխականներին, եկեղեցու պարին ծանօթութիւններ կախելով կամ ուր որ լրագիր կայ, լրագրներում հրատարակելով, իսկ եթէ նախագահը կարիոր դատէ, նաև ծանուցագրեր ուղարկելով։

10) Ընդհանուր ժողովի պարապմանց առարկաներն են։

Ա. Ընտրել ծխական հոգաբարձութեան անդամներ։

Բ. Ընտրել հոգաբարձութեան հաշիւներն ստուգող անձինք։

Գ. Հաստատել նախահաշիւը։

Դ. Սահմանել միանուագ կամ պարբերական տուրքեր։

Ե. Քննել իւր չրջանին վերաբերեալ այն խնդիրները, որոնք հոգաբարձութիւնն առաջարկում է նրա լուծմանը։

11) Հոգաբարձութիւնը բաղկացած է հետեւեալ անդամներից։

Ա. Միաբան քահանաները, որոնց նշանակում է Թեմակալ Առաջնորդը։

Բ. Եկեղեցու երեցփոխանը, որ հոգաբարձութեան անհրաժեշտ անդամ է։

Գ. 3—12 անդամ ընտրուած ընդհանուր ժողովից։ Ընտրելի անդամների թիւը որոշում է ընդհանուր ժողովը։

12) Հոգաբարձութեան ընտրեալ անդամների պայմանաժամն է երեք տարի։

Ծանօթ. Առաջին տարին վիճակով հեռանում է ընտրեալ անդամների $^1/_3$, երկրորդ տարին նոյնպէս վիճակով հեռանում է միւս $^1/_3$, իսկ այնուհետև հեռանում են և երեք տարի չարունակ ծառայող անդամները։ Հեռացող անդամները կարող են վերընտրուել։

13) Ընդհանուր ժողովն ընտրում է նաև երեք անձնափոխանորդ դարձեալ երեք տարի ժամանակով։

14 Հոգաբարձուների ընտրութեան մասին յայտնւում է Թեմակալ Առաջնորդին և եթէ երկու չաբաթուայ ընթացքում բողոք չլինի նրա անունով, այն ժամանակ նրանց ընտրութիւնը վաւերացրած է համարւում։

15) Եթէ Թեմակալ Առաջնորդին տուած բողոքների պատճառով ընտրութիւնն անվաւեր ճանաչուի, այն ժամանակ Թեմ. Առաջնորդը տնօրինում է ընդհանուր ժողովի միջոցով նրանց փոխարէն ուրիշներին ընտրելու և առաջարկելու իւր հաստատութեանը։

16) Եթէ նախագահը կամ անդամը կանխաւ յայտնէ, որ անկարող է ներկայ լինել նիստերին, այն ժամանակ բացակայի տեղը հրաւիրւում է անձնափոխանորդը։

17) Եթէ հոգաբարձուն առանց օրինաւոր պատճառի վեց ամիս բացակայ լինի, կընամարւի հեռացած, և տեղը փոխարինում է անձնափոխանորդը։

18) Հոգաբարձութիւնն ընտրում է իւր միջից նախագահ երեք տարով, և գանձապահ մի տարով, նրանք կարեն վերընտրուել։

19) Հոգաբարձութիւնը կարող է հրաւիրել, ըստ չափու կարողութեան, և ուրիշ անձինքներ հոգաբարձական ժողովին ներկայ լինելու խորհրդակցական ձայնով։

20) Հոգաբարձութեան առաջարկուած խնդիրները վճռւում են ձայների բազմութեամբ. ձայների հաւասար բաժանուելու ժամանակ առաւելութիւնն այն կողմն է, որտեղ է նախագահը։ Հոգաբարձութեան նիստերի ժամանակ նրանց զբաղմունքի կարգը, պարտաւորութիւնների բաժանումն անդամների մէջ և այլն սահմանւում է նոյն իսկ հոգաբարձութիւնների որոշմամբ, որոնք պէտք եղած ժամանակ տեղեկութիւն են տալիս Թեմ. Առաջնորդին։

21) Հոգաբարձական նիստերն օրինաւոր են, եթէ ներկայ է ոչ պակաս քան բոլոր անդամների $^2/_3$։

(Վերջը միւս անգամ)

Հոգեւոր



Երթեւեկութիւնը Բաթումի և Օզեսայի միջև մայիսի 8-ից սկսած.

ԲԱԹՈՒՄԻՑ ՕԴԵՍՍԱ ԳՆՈՒՄ Է չաբաթ գիշեր, ժամը 2-ին, չրջանառու գծով. հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Երկուշաբթի գիշեր, ժամը 2-ին, չրջանառու ընթացքով, հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Երեքշաբթի գիշերը, ժամը 2-ին չրջանառու ընթացքով, հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, երեկոյեան $11^1/_2$ ժամին ճեպընթաց գնացքով, Նալչիկի և Սևաստոպոլի վրայով։

Հինգշաբթի, ցերեկը ժամը 12-ին, Նովոռոսիյսկի և Կերչի վրայով։

ՕԴԵՍՍԱՅԻՑ ԲԱԹՈՒՄ ԳԱԼԻՍ ԵՆ.

Կիրակի, երկուշաբթի, ուրբաթ օրերը, երեկոյեան չրջանառու ընթացքով։

Ուրբաթ օրերը, ճեպընթաց գնացքով։

Չորեքշաբթի առաւօտեան ուղիղ գծով «Ռուսկոյէ» ընկերութեան գործակալութիւնը գանւում է Թիֆլ. Ագն. բանկի գալերէյում, №№ 117 և 118.

Երկաթուղու գնացքներ։

Թիֆլիսից Բաթում գնում է մարդատար գնացքը առաւօտեան 9 ժամ 30 րոպէին, իսկ Բաթում հասնում է երեկոյեան 9 ժամ 45 րոպէին։ Պոստային գնացքը երեկոյեան 6 ժամ 50 րոպէին. Բաթում հասնում է 8 ժ. 15 րոպէին։

Բաթումից Թիֆլիս գալիս է մարդատար գնացքը առաւօտեան 9 ժ. 40 րոպէին։ Թիֆլիս հասնում է երեկոյեան 9 ժ. 55 րոպէին։ Պոստային գնացքը գիշերը 11 ժ. 20 րոպէին, Թիֆլիս հասնում է ցերեկը 12 ժամ 25 րոպէին։

Թիֆլիսից Բագու գնում է պոստային գնացքը ցերեկը 1 ժամ 10 րոպէին, Բագու հասնում է առաւօտեան 7 ժամ. 30 ր.։

Բագուից Թիֆլիս գալիս է պոստային գնացքը գիշերը 11 ժ. 5 րոպէին, Թիֆլիս գալիս է երեկոյեան 5 ժ. 50 րոպէին։

Թիֆլիսից Գանձակ գնում է ապրանքակիր-մարդատար գնացքը երեկոյեան 7 ժամ 27 րոպէին, Գանձակ հասնում է առաւօտեան 7 ժ. 40 ր.

Գանձակից Թիֆլիս գալիս է ապրանքակիր-մարդատար գնացքը երեկոյեան 6 ժամին, Թիֆլիս գալիս է առաւօտեան 7 ժամ 35 րոպէին։

Թիֆլիսից Միխայլովո գնում է մարդատար-ապրանքակիր գնացքը ցերեկը ժամը 3-ին, Միխայլովո հասնում է երեկոյեան 7 ժ. 15 ր.։

Միխայլովոյից Թիֆլիս գալիս է ապրանքակիր-մարդատար գնացքը գիշերը 1 ժ. 30 ր. Թիֆլիս գալիս է առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԷԼԷՕՊԱՏ

ՊՐ. ԿԻՆՈՒՆԵՆ
մազերի համար

ԻՆԵՆԻՆԻ ԷԼԷՕՊԱՏԸ գանւում է վաճառելու համար դեղատ. և կոմիս. բոլոր մեծ մագավճառատներում

120 գրամ պարունակող մի փլակոնի գինը 1 ր. 50 կ. առանց ճանապարհածախսի։

Խնդրում է ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր փլակոնի տակաւ վրա գտնուած դրոշմի վրայ

Պր. Կինունենի

Գլխաւոր պահ. Демидовъ пер. № 1.

(М.) 20—19.

Սրանով խնդրում եմ այն պարոններին, որոնք ինձանից իմ

ՇԻՐԻՆԱՆՑ ՆԱԽՇՈՒՆԸ

վէպի համար բաժանորդագիրներ են առացել, որքան կարելի է չուտ տեղեկութիւն տան բաժանորդագրութեան մասին, ուղարկեն բաժանորդագները, որ ըստ այնմ կարգադրութիւններ անեմ աշխատութեանս տպագրութեան վերաբերմամբ։

Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵՆԱՑՔԻՑ

գրած վէպիկներիս և պատկերներիս հաւաքածուն

«ՄՈՒՏՅՈՒԱՆ ԱՇԽԱՐՀ»

վերնագրով արդէն պատրաստ է տպագրութեան համար, և թոյլատրութիւնն էլ ստացուած է։

Սակայն, միջոցներիս սղութեան պատճառաւ, անկարող եմ այդ աշխատութիւնս ևս հրատարակել «ՇԻՐԻՆԱՆՑ ՆԱԽՇՈՒՆԸ» աշխատութեանս հետ, ուստի դիմում եմ իմ աշխատասիրութեանց համակրող ձեռնհաս անձերին առ այժմ հրատարակել «Մուտացած աշխարհ» ս. հատորը, որ մօտ 350 ր. ծախս կընայի։

Պայմանների մասին խնդրում եմ ցանկացողներին դիմել ինձ, Թիֆլիս, «Նոր-Դար»-ի խմբագրութեան միջոցով։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ

Ամլասի վրայ **ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ** և ցանկացողի պատկերը բազմոցի բարձի երես՝ 3—5 րուբլի։

Լուսամփոփ մեռաքսեայ կտորների վրայ նկարուած 6 հայ գործիչների պատկերներով 3 ր.։

Յաղճապակեայ լուսամփոփ և ափսէներ պատկերներով՝ 1 — րուբլի։

Մեռաքսէ թաշկինակներ յայտնի մարդկանց պատկերներով 60 կ.— րուբլի։

Ցանկացողները կարող են նկարուել ինձ մօտ կամ ուղարկել իրենց ցանկացած անձերի պատկերը։

Ընդունում եմ աշակերտուհիք և աշակերտներ կարճ միջոցում մատչելի գնով լուսանկարչութիւն սովորեցնելու։

Ցանկացողը դիմէ այս հասցէով Тифлисъ, Фотографія Артюра Г-жѣ А. Родіоновой, Елизаветинская ул. 5—4

АРТЕЛЬ ТАКАНЪ

М. А. ЧОЛАКОВЪ *и* **П. И. ВОЛКОВЪ**

МОСКВА

Мебельный магазинъ и складъ—Церковная ул., Ивановскій пер., домъ Хлудова.

ЗАКАЗЫ ПРИНИМАЮТСЯ

Мебель, диваны, кушетки, (покрытые ковромъ), ширмы, (покрытые ковромъ), этажерки, (покрытые ковромъ), столы, (покрытые ковромъ), стулья, (покрытые ковромъ), кресла, (покрытые ковромъ), (покрытые ковромъ), (покрытые ковромъ),